

Ր Ա Ֆ Ֆ Ի *)

(ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ)

I

ԿԵԱՆՔԸ

Բաֆֆիի ծննդեան թւականի մասին, առհասարակ, կարծիքների տարբերութիւն չի եղել հայոց գրականութեան մէջ. ամենքի կողմից ընդունւած էր, որ նա ծնւել է 1835-ին: Երկու տարի առաջ, սակայն, Համազայինի Ֆրանսայի շրջանի վարչութիւնը, հիմնւելով Տիկ. Աննա Բաֆֆիի կարծիքի վրա, մէջտեղ հանեց 1837 թւականը, եւ մէր ծոյլ մտաւորականութիւնը, երեւի իր անփութութիւնը արդարացնելու համար, առանց ճշտելու, ընդունեց այդ թւականը և յորելեանը փոխանակ 1935-ի՝ ձեւ 1937-ին:

Ինչպէս արդէն առիթ ունեցել ենք արտայայտւելու, Տիկ. Ա. Բաֆֆիի, հետեւաբար Համազայինի կարծիքը որ եւ է փաստական տւեալով հիմնաւորւած չէ, ուրեմն, եւ չի կարող համարւել հիմք փոխելու համար մինչեւ այժմ ընդունւած տարեթիւը. Բաֆֆիի կենսագիրները ժամանակին նշանակելով 1835 թ., անշուշտ, ունեցել են լուրջ պատճառներ այդպէս վարւելու, եւ քանի նոր ու անհերքելի փաստեր հրապարակ չեն բերւած, այդ ժաւականը փոխելու ո՛չ մի հիմք չկայ: Որով, ասել է, Բաֆֆիի յորելեանը կատարւում է երկու տարւայ ուշացումով, երեւի, արդարացնելու համար ժողովրդական խօսքը, թէ՝ լաւ է ուշ, քան երբեք:

Այսպէս ուրեմն, Բաֆֆին, կամ իսկական անունով, Յակոբ Մելքոն - Յակոբեանը ծնւել է 1835 թ., Փայաջուկում, որ Սալմաստ

*) Ներկայ յօդածի նպատակն է ոչ այնքան պատկերացնել Բաֆֆիի ողջ կեանքն ու գործը, որքան նիւթեր տալ նրա կենսագրութեան համար, նիւթեր բում իսկ Բաֆֆիի նամակներից քաղուած, իբրեւ հում ատաղձ Մեծ Վիպասանի կեանքով ու գործով հետաքրքրողների համար:

գաւառի հինգ զուտ հայաբնակ դիւղերից մէկն էր, Հաւթւանից յետոյ երկրորդը իր մեծութեամբ։ Մառազարդ, հարուստ այդիներով շրջապատւած գեղեցիկ Փայաջուկը մինչեւ անցեալ դարի 90-ական թւականները շիլազործութեան կենտրոններից մէկն էր։ Սալմաստի հայութիւնը, ընդհանրապէս, յայտնի էր այդ արհեստով։ Հայ դիւղացիներից շատերը բամբակի թելից կտաւ էին դործում, ներկում եւ «շիլա» պատրաստելով՝ արտահանում էին շրջակայ վայրերը, մինչեւ կովկաս, Վան եւ Թիւրքիայի արեւելեան միւս նահանդները։

Բաֆֆիի հայրը՝ Մելիք – Միրզա՝ Հարուստ հողագործ էր եւ միանգամայն աչքի ընկնող վաճառական։ Նրա առեւտրական կապերը հասնում էին մինչեւ Թաւրիկ, Վան, Թիֆլիս։ Փայաջուկցի Մելիք – Միրզայի նահապետական չէն ու հիւրասէր տան հոչակը տարածւած էր շատ հեռուները։

Յակոր անդրանիկն էր Մելիք – Միրզայի 12 զաւակներից։ Իր նախնական կրթութիւնը նա սուացաւ ծննդավայրում, մի վանեցի «գիտնական վարժապետի դպրոցում», որ կարելի է նախատիպ համարել «Կայձեր»-ի հոչակաւոր Տէր – Թողիկի դպրոցի։ Ուշիմ ու ջանասէր աղայ էր, բայց վանեցի «գիտնական»-ից Սաղմոսից ու Նարեկից զատ, բնականաբար, ուրիշ բան չէր կարող սովորել։ Հայրը տեսնելով որդու արտակարգ ընդունակութիւնները, առեւտրական ճամրորդութիւններից մէկի ժամանակ, տարաւ հետը Թիֆլիս եւ տեղաւորեց պետական գիմնազիայում։ Այդտեղ պատանի Յակորը սովորեց հինգ տարի՝ միաժամանակ հայերէնի դասեր էլ առնելով ժամանակի յայտնի հայագէտ Կար. Բելախեանի մօտ։

Բայց ուսումը կատարելագործել Յակորին չվիճակւեց։ Մելիք – Միրզայի դործերը խանգարւել էին, եւ հօր պահանջի վրա, նոր հինգերորդ դասարանը աւարտած, ստիպւած եղաւ վերադառնալ Սալմաստ եւ մտնել առեւտրական դործերի մէջ։

Թիֆլիսի ուսման տարիները, սակայն, ապարդիւն չէին անցել։ Յակոր ոչ միայն դպրոցական կրթութիւն էր ձեռք բերել, այլ եւ ծանօթացել էր հայոց պատմութեան ու գրականութեան, սիրել ու ոգեւորւել էր Հայաստանի անցեալով ու հայ ազգի ճակատագրով։ Դարձել էր անյագ ընթերցող եւ կարգացել էր ինչ որ ձեռքն էր ընկել ժամանակի հայերէն ու ոռւսերէն հրատարակութիւններից՝ ծանօթանալով նաեւ օտար գրականութեան զլուխ դործոցներին։

Ընթերցանութեան տեսչը նա հետը բերեց Սալմաստ եւ այստեղ էլ շարունակեց հետաքրքրւել զրով ու գրականութեամբ եւ հայ աղպային կեանքով։ Նրա մտաւոր հորիզոնի լայնացման եւ ազգասիրա-

կան զգացմունքների զարդացման համար մասնաւորապէս մեծ նշանակութիւն ունեցաւ այն ճամբորդութիւնը, որ նա առեւտրական գործով, կատարեց գէպի Տաճկահայաստան՝ Վասպուրական ու Տարոն։ Այստեղ տեսաւ նա հայենիքի անցեալ կեանքի փառաւոր յուշարձանները, ականատես եղաւ տիրող թշւառութեան, ժողովրդի տղէտ ու հարստահարուած վիճակին, հայ կղերի խաւարամտութեան ու ապիկարութեան։ Այցելեց Վարագայ վանքը եւ ծանօթացաւ այն ժամանակւայ հայ ամենալուսաւոր գէմքերից մէկի՝ Խրիմեան Հայրիկի հետ, որի անձից ու գործից խորապէս ազգւեց։ Այս ճանապարհորդութիւնից Յակոբը վերադարձաւ հարուստ տպաւորութիւններով, եւ տաճկահայ իրականութեան հիմնական ծանօթութեամբ, որ հետագային առատօրէն օգտագործեց իր վէպերն ու իրապաշտական յօդւածները գրելիս։

Մալմաստի միջավայրը նեղ էր ու անհրապոյլ հոգեւոր պահանջների աէլ մարզու համար։ Երիտասարդ Յակոբը փորձեց այդտեղ նոր կեանք յառաջ բերել, կրթական հիմնարկութիւններ ստեղծել, զարկ տալ զաւատի մշակութային ու տնտեսական յառաջդիմութեան, բայց առանձին յաջողութիւն չունեցաւ։ Միակ դրական գործը, որ նա կատարեց ծննդավայրում ապրած տարիների ընթացքում, սեփական մտաւոր զարդացումն էր բազմազան ընթերցանութեան միջոցով, եւ դրական աշխատանքը, որին նւիրւել էր ամբողջ էութեամբ։ Բարերախտաբար, նրա առեւտրական գործերն էլ յաջող չկնացին։ նա սնանկացաւ, կորցրեց ինչ որ ունէր եւ 1868-ին տեղափոխւեց Թիֆլիս, ուր առիթ ունեցաւ մօտից չփեկու «ուսումնական եւ արի աշխոյժ երիտասարդներից բազկացած մի նախանձելի շրջանակի» հետ։ Այստեղից մի անգամ էլ վերադարձաւ Պարսկաստան առեւտրական գործերով, բայց վերջնական ձախողանքի ենթարկելով՝ նորից գընաց Թիֆլիս եւ ընտանիքին մի կտոր հաց ապահովելու համար մըտաւ ծառայութեան մի հայի խանութ։ Այստեղ է, որ նա ծանօթացաւ Գր. Արծրունու հետ, որ պատրաստում էր «Մշակ»-ի հրատակութեան եւ որ այդ համեստ գործակատարին էլ մտցրեց իր խմբագրական շրջանի մէջ։ Գր. Արծրունին եւ Ռաֆֆին վառ գոյներով նկարազրել են այդ օրերի իրենց ապրումները։ «Եթէ ես ունեցել եմ մի քանի ոսկի բոպէներ, — զբանք պատկանում են ա'յն ժամանակին», զրում էր Ռաֆֆին 1879-ին այդ օրերի մասին։

Թիֆլիսում Ռաֆֆին մնում է հազիւ երկու տարի։ Ապա ուսուցչութեան պաշտօնով փոխազդրում է Թաւրիզ, ուր մի քանի տարի պաշտօնավարում հայկական դպրոցում եւ, ի վերջոյ, մի ծանր բա-

խում ունենալով տեղական աղաների հետ, «Մշակ»-ում դրած մի յօդւածի առիթով, ուսումնական տպարայ ընթացքում ստիպւած է լինում հեռանալ: Դրանից յետոյ տեղափոխում է Ազուլիս, նոյնպէս ուսուցչութեան պաշտօնով: Այսուղ էլ նրա գործունէութիւնը խաղաղ չի անցնում եւ հոգաբարձութեան հետ մի սուր բախում ունենալուց յետոյ՝ նոյնպէս հարկադրաւած է լինում թողնել զպլոցը: Այդ այն օրերին էր, երբ «Մշակ»-ում արտակարդ յաջողութեամբ սկսել էր լոյս տեսնել «Զալալէղղին»-ը: Գր. Արծրունին օգտակա առիթից եւ Բաֆֆիին պաշտօնի կոչեց «Մշակ»-ի մէջ: Այնուհետեւ 1878-ից սկսած մինեւ 1884 թ., Բաֆֆին աշխատեց «Մշակ»-ում՝ դառնալով, կարելի է ասել, առաջին հայ զբողը, որ իր գրչի վաստակով էր ապրում: Բաֆֆիի աշխատակցութեան տարիները կազմեցին եւ «Մշակ»-ի ու Գր. Արծրունու գործունէութեան ամենաբեղմնաւոր եւ փայլուն շրջանը:

1884-ին Գր. Արծրունու եւ Բաֆֆու յարաբերութիւնները լար մեցին եւ, ի վերջոյ, խղեցին: Բաֆֆիի կեանքի այդ էջը մենք պատկերացրել ենք մի ուրիշ տեղ *), այսուղ կանցնենք վրայից: Այնուհետեւ Բաֆֆին տեղափոխեց Արգար Յովհաննիսեանի «Արձագանք»-ի խմբադրատունը եւ մինչեւ մահ աշխատեց այդ թերթում՝ հրատարակելով այնտեղ իր գլուխ գործոցը՝ «Սամուէլ»-ը: Մեռու Բաֆֆին 1888 թ. ապրիլ 24-ին:

Բաֆֆիի մահը ցնցող տպաւորութիւն թողեց հայ հասարակութեան վրա, եւ նրա յուղարկաւորութիւնը ստացաւ համազգային սուրդի բնաւորութիւն, հասարակական բոլոր խաւերի մասնակցութեամբ: Բազմաթիւ վայրերից եկել էին պատգամաւորներ: Մօտ 80 պահկուծակենաց էր գրւած դադաղի վրա: Ահա ինչպէս էր պատկերացնում այդ թագումը «Մուրճ»-ը, մահւան հնդամեակի առթիւ: «Թաղման պատիւներից դա առաջինն էր, որ տալիս էր հայութիւնը իր գրական գործչին: Իս մեծ թաղում էր: Օրը անձրեւային, բայց անձրեւ, որը տեղում էր երկնքից այնպիսի բացառիկ սաստկութեամբ, որ կարծես գալիս էր միմիայն մարդկանց անկեղծութիւնը փորձելու համար: Բայց հանդուցեալի մեծութիւնը իւրն արաւ տղամարդիկ, կանայք, օրիորդներ անդիմադրելի անձրեւի տակ զնացին իրանց վերջին յարգանքը մատուցանելու նորան, որին կենդանութեան օրե-

*) Տե՛ս Բաֆֆիի ծննդեան հարիւրամեակի առքիւ հրատարակած ժողովածուն, Փարիզ, 1937:

բոլ եւս իրանց յարգանքը չէին զլացել մատուցանելու՝ դրականութեանը եւ ապահն տւած մեծ ծառայութիւնների համար» : *)

Բաֆֆին մեռաւ համեմատարար երխուսարդ հասակում, երբ դեռ այնքա՞ն բան ունէր տալիք հայոց գրականութեան: Իր գործունէութեամբ Բաֆֆին մի փայլուն գարավաճան բաց արաւ հայոց պատմութեան մէջ: Նոր խօսք ասաց ու նոր գործի ձանապարհ ցոյց տւեց եւ իր հոգու ու մաքի ճոխութեամբ լեցրեց հայ աշխարհը:

II

ԽՈՒԶԱԲՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՅՖԻՒ ԵՒ ԱՐԾՐՈՒՆՈՒՄԸ

Իր բնաւորութեամբ եւ ապրելակերպով, Բաֆֆին ինքնամփոփի, ժուժեկալ ու խաղաղ մարդ էր — ճիշտ հակառատկերը իր զէպերի յեղափոխական հերոսների: Նրա կննսագրութիւնը զրեթէ ոչ մի աչքի ընկնող երեւոյթ չունի: Նրա կեանքում չկան ցայտուն դէպքեր կամ արտակարդ ապրումներ: Արտաքնապէս սովորական քաղքինի մարդու կեանք էր Բաֆֆիի կեանքը:

Մի զէպք, սակայն, սաստիկ ցնցեց Բաֆֆիին եւ պատճառ դարձաւ ծանր մտահոգութիւնների: Այդ զէպքը այն խուզարկութիւններն են, որ 1883 թ. մայիսին կատարւեցին «Մշակ»-ի խմբագրատանը եւ Գր. Արծրունու ու Բաֆֆիի բնակարաններում: Բաֆֆին Փանեանցին գրած նամակներում երկարօրէն պատմել է այդ խուզարկութիւնների մասին, եւ երեւում է, որ նա չափազանց ազդւած էր, վախենալու աստիճան: Սնկարելի չէ, որ այդ զէպքը որոշ նշանակութիւն ունեցած լինի Բաֆֆիի հետազայ վարքագծի համար: Նա դարձաւ աւելի դոգլը ու խոհեմ, թէեւ իր դադափարներով մինչեւ մահ էլ մնաց անփոփոխ. ինչ որ էր «Զալալէզգիին»-ը 1878-ին՝ նոյնը եղաւ եւ «Սամւէլ»-ը կեանքի վերջին ըրջանում:

Առաջ բերենք խուզարկութեան այդ զէպքը այնպէս, ինչպէս որ ներկայացւած է Բաֆֆիի նամակներում հեղինակի խոկապով: Այսպէս, 1883 թ. մայիս 3-ին Բաֆֆին գրում էր Փանեանցին. «Շտապում եմ յայտնել Ձեզ մի չառ տխուր լուր. ամսոյս 1-ին ալ. Արծրունու բնակարանը եւ «Մշակ»-ի խմբագրատունը խուզարկութեան ենթարկեցան, որը տեւեց երեք օր: Խուզարկողներն էին, բացի ոստիկանութիւնից, նահանգական գատարանի պրոկուրորը եւ մի ժան-

*) «Մուրհ», 1893 թ. № 1, էջ 147:

դարմի գնդապետ։ Բոլոր թղթերը, ինչ որ կարողացան դանել, թէ պ։ Արծրունու բնակարանի մէջ եւ թէ խմբագրատան մէջ, զբաւեցին։

Յայտնի չէ, թէ ինչ նպատակով կատարւեցաւ այդ խուզարկութիւնը։ անպատճառ մատնութեան գործ է, եւ գուցէ մի որ եւ իցէ հայի մատը խառնւած է այդ գործի մէջ։ Բայց ես վստահ եմ, որ տարած թղթերի մէջ չեն կարող գտնել այնպիսիները, որ պ։ Արծրունու անձնաւորութիւնը կասկածելի դարձնէին։ Ես իրբեւ նրա շատ մօտ բարեկամ, դիտեմ, որ նա երբեք կասկածաւոր անձանց հետ յարաբերութիւններ չեն ունեցել։ Նրա գործունէութիւնը եղել է բուն ազգային, եւ դրա մէջ եւս կառավարութեան որոշած սահմաններից չէ անցել։ Այն բոլորը, ինչ որ կատարել է նա Տաճկաստանի հայոց վերաբերութեամբ, կառավարութիւնից ծածուկ չէին։

Զգիտեմ ինչով կը վերջանայ այդ փորձանքը։ չգիտեմ նաեւ, թէ արդեօք «Մշակ»-ի հրատարակութիւնը կը խափանե՞ն, թէ ոչ։ Բայց ինչ էլ որ լինի, «Մշակ»-ը գուցէ մի քանի շարաթ հրատարակել չէ կարող, որովհետեւ խմբագրատան ըոլոր նիւթերը տարել են, մի թղթի պատառ անդամ չեն թողել։

Այժմ սկսել են սաստիկ ուշադրութիւն դարձնել հայերի վրա։ Երեւանում 22 նշանաւոր երիտասարդների տներում խուզարկութիւն է կատարւել, բոլորին էլ ոստիկանութեան հսկողութեան ներքոյ են դրել, մէկը բանտարկւած է։ Շարժաւիթները չնչին են։ միայն լուից ուղտ են չինում եւ չնչին գործերին քաղաքական կերպարանք տալիս։ «Պատկ» լրագիրը խափանւած է։

Պարոն Արծրունին կալանաւորւած չէ։ Մեղանից ամէն մէկը ժամէ ժամ սպասում է, որ ժանդարմները կը մտնեն իր բնակարանը։ Ասում են՝ մի քանի հայոց աներում եւս պէտք է խուզարկութիւններ լինեն։ Ինչպէ՞ս կը վերջանայ այդ բոլորը, դժւար է նախագուշակել։ Սաստիկ յուսահատութեան մէջ ենք։

Այստեղ մի խումբ, որի պարագլուխն է «Մեղու»-ի խմբադիրը, աշխատում է, որ Մակարի Կաթողիկոս լինելը յաջողցնէ։ Մի քանի խումբեր եւս Ներսէսի (Վարժապետեան... ԽՄԲ.) համար են աշխատում։ Յայտնի չէ, թէ կառավարութիւնը ո՞ր աստիճան համարում ունի Մակարի վրա։ Բայց նրա կուսակիցները ամէն կողմ տարածում են, թէ կառավարութեան կանդիգատն է։ Եթէ Մակարի Կաթողիկոս ընտրելը յաջողեցնեն (որին ես չեմ հաւատում), այն ժամանակ էջմիածինը կատարեալ աւաղականոց կը դառնայ։ Մանկունուց աւելի վատ մարդիկ կը մտնեն այնտեղ։

կաթուղիկոսական աթոռին արժանի մենք միայն մէկ մարդ ունենք, եւ դա Ներսէսն է: Ամէն մի աղնիւ հայի ոլարտքն է նըա համար աշխատել»: *)

Երկու շաբաթ անցած, մայիս 17-ին, Բաֆֆին նորից անդրագաւնում է նոյն խնդրին:

« Անցեալ նամակով յայտնած էի Զեղ, որ «Մշակ»-ի խմբագրատիւն մէջ խուզարկութիւն կատարւեցաւ. այժմ շտապում եմ հաղորդել Զեղ, որ ներկայ ամսի 13-ին նոյնպէս խուզարկութիւն կատարւեցաւ իմ բնակարնի մէջ: Բոլոր թղթերս, մինչեւ անդամ զեռ չտպաւած գրաւոր աշխատութիւններս — բոլորը գրաւեցին: Եւ այժմ գտնում եմ ժանդարմների հոկտեմբեան ներքոյ. ինձ արդիւած է Թիֆլիսից հեռանալ:

Դեռ յայտնի չէ, թէ ինչով կը վերջանան այդ խստութիւնները. միայն այդքանը յայտնի է, որ սաստիկ նշանակութիւն են տալիս գործին, որը ինքնըստինքեան շատ հասարակ բան է:

Թէ ես եւ թէ իմ համախոհները մինչեւ այսօր Ռուսաց կառավարութեան դէմ ոչինչ յանցաւոր նախատակներ չենք ունեցել եւ երբեք ուսւ նիգիլիստաների **): Հետ յարաբերութիւններ չենք ունեցել: Մեր գործունէութեան նախատակը, մեր ցանկութիւնները խիստ համեստ են եղել եւ մեր ազգային սիէտքերի սահմանից այն կողմը չեն անցել: Հայկական հարցը ծագելուց յետոյ, մենք, իրաւ է, աշխատել ենք տաճկահայերի ցաւալի գրութեան բարւոքման մասին, աշխատել ենք Բերլինի 61-րդ յօդւածի իրագործման մասին, — բայց մեր աշխատութիւնները կատարել են հրապարակարար. մենք գաղտնի ոչինչ չենք ունեցել:

Իսկ այժմ, երեւի զանազան մատնիչներ, այստեղի կառավարութիւնը մոլորութեան մէջ են ձգել, իրը թէ գտնում են զանազան զաղանի ընկերութիւններ, թէ այստեղ Անդրկովկասում եւ թէ Տաճկաստանում, որոնք ծածուկ կապեր ունեն միմեանց հետ եւ ամենայն ջանքերով աշխատում են վերականգնել Հայոց հին թագաւորութիւնը եւ այլն: Տեսնում էք, որքան հրէշաւոր կերպարանք են տւել գործին: Այս տեսակ երեւակայական ընկերութիւններ մենք երբեք չենք ունեցել եւ այժմ չունենք: Եւ բոլոր Եւրոպայից ստորագրւած 61-րդ յօդւածի իրագործումը պահանջելու համար հարկ չկար գաղտնի ընկերութիւններ ստեղծել:

*) «Արարատ», 1913 թ., № 4, էջ 350 – 51:

**) Նիկիլիստ՝ ոչնչական — ժամանակի ուսւ յեղափոխականները:

Ես չեմ կարծում, որ իմ բնակարանից տալած թղթերի մէջ գըտնեն այնպիսիներ, որոնք որ եւ իցէ յանցանք դնեն իմ վրա. իսկ իմ մինչեւ այսօր լոյս ընծայած զրքերը բոլորը տպագրել են ցենդուրայի թոյլառութեամբ։ Ես ինչո՞վ եմ մեղաւոր, որ կառավարութեան տրամադրութիւնը հայկական հարցի վերաբերութեամբ այժմ, ինչպէս երեւում է, փոխւել է։ Թո՞ղ հրամայեն, որ ես այսուհետեւ չգրեմ։ Ես ուրախ կը լինէի, եթէ այսքանով վերջանար զործը, բայց վախենում եմ, որ հեռացնեն Ռուսաստանից, որովհետեւ ես օտար սետութեան հպատակ լինելով՝ բանտարկել կամ աքսորել չեն կառող։

Ես նպատակ ունի յունիսի 1-ին հեռանալ Թիֆլիսից եւ զնալ տաճկաց Հայաստանում ճամապարհորդելու, բայց այդ անբախտութիւնը կապեց ինձ Թիֆլիսի հետ։ Ես ստիպւած պիտի լինեմ մնալ այսուղ եւ սպասել մինչեւ քննութիւնների վերջանալը։

Վաստ ժամանակների մէջ ենք ապրում. «լուից ուղարկած են շինուած» եւ մարդկանց չարչարում են։ Խնդրում եմ, Զեր նամակներում զգոյշ լինէք. շատ հաւանական է, որ իմ անունով եկած նամակները կը բաց անեն։ Զեր առաջաւայ նամակները, թէեւ բոլորովին անմեղ էին, այսուամենայիւ ես ոչնչացրի։*)

Էլի երկու շաբաթ յետոյ, յունիս 2-ին զրում է. . . . «Մշակ»-ը դեռ գաղարեցւած չէ, եւ յոյս ունենք, որ չղաղարեցնեն։ Միայն «Մշակ»-ի վերաբերութեամբ սաստիկ խստութիւններ են զործ դըրւում. ցենդորը խմբագրին պարաւորեցրել է, որ իւրաքնչիւր համարի մէջ տպւած թէ անստորագիր եւ թէ կեղծ անուններով ստորագրւած բոլոր յօդւածների, թղթակցութիւնների եւ մինչեւ անզամ լուրերի հեղինակների անունները ամէն անզամ պէտք է յայտնի ցենդորին։ Մինչեւ այսօր խմբագրի միշտ զաղտնի էր պահում իր աշխատակիցների անունները եւ ամէն պատասխանաւութիւն իր վրա էր առնում, իսկ այժմ ստիպեցնում են յայտնել բոլորի անունները։ Դրա հետեւանքը այն կը լինի, որ մեր աշխատակիցները այսուհետեւ երկիւլ կը կրեն եւ կը գաղարեն թղթակցութիւններ ուղարկել կամ լուրեր հաղորդել։ Լրագիրը կը վնասւի։

Թէ պ. Արծրունու զործը եւ թէ իմ զործը դեռ եւս քննուած է. Ես չեմ կարծում, որ մեր մօտից տարած թղթերի միջից գտնեն այնպիսի բաներ, որոնք որ եւ իցէ յանցանք դնէին մեզ վրա։ Մենք կասկածաւոր թղթեր երբեք չենք ունեցել եւ կասկածելի հրատարակու-

*) «Արաբատ», 1913 թ., № 6 - 7, էջ 565 - 6:

թիւնների հետ յարաբերութիւն ունենալուց միշտ հետու ենք պահել մեղ։ Իսկ որքան գործել ենք մեր բուն ազգային գործերի մասին, — դա մեղ թոյլ տրւած է եղել կառավարութիւնից։ Նրա հակառակ որ եւ իցէ գաղտնի նպատակ կամ յանցաւոր ցանկութիւններ չենք ունեցել։ Ուրեմն, այլեւս ի՞նչ կարող էին գտնել, որով գատապարտէին մեզ։ Արդարութիւնը վերջ ի վերջոյ յաղթող կը հանդիսանայ եւ մատնիչների երեսը կը սեւանայ։

Դուք, ի հարկէ, լսած կը լինէք, որ Երեւանում եւս մի քանի նշանաւոր երիտասարդների մօտ խուզարկութիւններ են արել, սկզբ բում մի քանի օրով կալանաւորել են, յետոյ գրամի երաշխաւորութիւն են առել ու բաց թողել…

Վաս ժամանակներում ենք ավլում, ամենաարդար մարդը կարող է կասկածանքի ենթարկել եւ տարիներով տանջւել։ Զգիտենք, ինչով կը վերջանայ այդ բոլորը։ Դրութիւններս սաստիկ յուսահատական է։ Ժամէ ժամ սպասում ենք նորանոր անախորժութիւնների։ Աշխատելու եւ գործելու սիրո չէ մնացել։ Անորոշ դրութիւնը սպանում է մեղ։ Յաւում եմ, որ մի այսպիսի ժամանակ, երբ երկու նշանաւոր ազգային հարցեր ունենք վճռելու (կաթուղիկոսական եւ հայկական հարցը), մենք ստիպւած ենք առժամանակ լոել։ Մեր հակառակորդները խօսում են, գրում են, իսկ մենք պատասխանել չենք կարողանում…

Ես այժմ ժանդարմերիայի վարչութեան հսկողութեան ներքոյ եմ գտնւում, ինձ արգելւած է թիֆլիսից հեռանալ։ Երբ կաղատեն ինձ, դիտաւորութիւն ունեմ առժամանակ թողնել թիֆլիսը։ Բայց ուր դնալիքս եւ ինչով գնալիքս չդիտեմ»։

Յունիս 26-ի նամակում կարդում ենք.

« Իմ վիճակը այժմ աւելի ծանրացաւ. քանի օր է, որ արդէն տընային բանաբարկութեան եմ ենթարկւած, բնակարանիցս դուրս գալու իրաւունք չունեմ, տան դրանը պահապան են դրել։

Այս դրութեան մէջ պէտք է մնամ մինչեւ քննութիւնների վերջանալը, բայց քննութիւնները կարող են տարիներ տեւել։

Թէեւ մինչեւ այսօր ոչ մի մեղագրանք ապացուցւած չէ իմ վերաբերութեամբ, այսուամենայիւ, խստութիւններ են գործ զնում։ Իմ բնակարանից տարած թղթերի մէջ գտել են մի քանի բոլորովին անշան եւ անմեղ բաներ, որոնց մէջ նշանակութիւն են տալիս։ Թէեւ վերջը, երբ գործը այստեղի պալատի պրոկուրորի ձեռքը կը հասնի, այն ժամանակ կը յայտնւի արդարութիւնը, բայց մինչեւ այն ժա-

ժանակը բաւական տանջանքներ պէտք է կրեմ : Ի՞նչ պէտք է արած , կը համբերենք :

Իմ թղթերը , որ տարել էին իմ բնակարանից , տակաւին չեն վերադարձրել , բայց պ . Արծրունու բնակարանից տարած թղթերը վերադարձրեն . պահել են երկու թուղթ միայն , բայց շատ անմեղ բաներ են :

Զանազան քաղաքներում հայ երիտասարդների տներում խուզարկութիւններ են կատարուում , բայց ամէն տեղ ոչինչ չեն գտնում : Զգիտեմ ինչով կը վերջանայ այդ բոլորը : Զարմանալին այն է , որ խուզարկութիւնները կատարուում են նրանց մօտ միայն , որոնք «Մըշակ»-ի թղթակից են եղել :

Այնքան վշտացած եմ , որ եթէ աղասուելու լինեմ , վճռել եմ այլ եւս այստեղ չմնալ . բաւական տանջւեցայ : Մեր հասարակութեան սառնասրութիւնը աւելի սպանում է ինձ . ո՛չ մի կողմից կարեկցութիւն չեմ գտնում : Մեր ժողովրդի ապերախտութիւնը զէսլի իր մըշակները Զեղ բաւական յայտնի է :

Խնդրեմ , եթէ ինձ նամակ գրելու լինէք , ուզզակի իմ անունով չուզարկէք . զրէք մասնաւոր անձանց ծրաբների մէջ» :

Բայց կացութիւնը Բաֆֆիի կրծածի չափ յուսահատական չէր : Յուլիս 12 նամակից արդէն իմանում ենք , որ տնային բանարկութիւնը վերացել է : Բաֆֆին զրում է . « Տնային բանտարկութեան մէջ մնացի 10 օր միայն , յետոյ պարսից հիւզասոսը երաշխաւոր եղաւ 3000 րուբլու պատասխանատութեամբ եւ ինձ աղաս թողուցին , բայց տակաւին թիֆլիսից հեռանալու իրաւունք չունեմ , մինչեւ զործերի քննութիւնը վերջանայ :

Պարոն Արծրունին սաստիկ հիւանդ էր . կուրծքից արիւն էր գընում . այժմ արիւնը դադարել է , եւ առողջանալու վրա է . վտանգը անցաւ : Վերջին ժամանակների անախորժ հանգամանքները նրա վրա սաստիկ ներգործութիւն արեցին , եւ նա դիմանալ չկարողացաւ» :

Իսկ Սեպտ . 27 նամակում արդէն կարդում ենք .

« Զեղ յայտնի դործը լաւ դրութեան մէջ է . թէ ես եւ թէ ոլ . Արծրունին արզարացած ենք : Երեւանի 32 հոգի մեղաղբածներից կը պատժեն երեք անձինք միայն , թեթեւ պատժով : Բայց թէ ես եւ թէ ոլ . Արծրունին տակաւին գտնուում ենք երաշխաւորութեան եւ հսկողութեան ներքոյ , որովհետեւ զործը ուզարկւած է Ա . Պետերբուրգ , այնտեղ պէտք է տան վերջնական վճիռը : Իմ թղթերը դեռ չեն վերադարձրել :

Այս տարի ես շատ վնասներ կրեցի : Մշտապէս կաշկանդւած լինելով՝ ոչինչ գրել եւ ոչինչ հրատարակել չկարողացայ : Նոյն գրութիւնը դեռ եւս շարունակում է : Երեւակայեցէք մի գրողի վիճակը, որ պէտք է ապրէ գրական աշխատանքով :

Այս տեսակ գժւարութիւններ շատ ենք անցկացրել, կը համբերենք եւ կը սպասենք մինչեւ վերջը» :

Շուտով՝ Բաֆֆու, ինչպէս եւ Արծրունու վրայից բոլորովին վերացւեց կասկածը, բայց գրաքննական խստութիւնները մինչեւ վերջ էլ մնացին նրանց վերաբերմամբ :

III

ՌԱՅՖԻՆԻ ԳՈՐԾԸ

Բաֆֆին սկսել է գրել վաղ երիտասարդ հասակում : 1855 թ. ին, ուրեմն դեռ երբ քսան տարեկան էր, Փայաջուկում, նա արդէն պատրաստ ունէր «Սալբի» մեծ աշխատութիւնը, որ լոյս տեսաւ միայն 1911-ին : Բաֆֆիի բնորոշման տեսակէտից շատ հետաքրքրական է, որ իր այդ երկը նա նույրել է «Անմահ Մ. Նալբանդեանցի միշտ օրհնեալ յիշատակին», որից երեւում է, թէ «Մեր Հայրենիք»-ի հեղինակը ի՞նչ աղղեցութիւն է ունեցել երիտասարդ Բաֆֆիի վրա : «Սալբի»-ն ձօնելով Մ. Նալբանդեանցի յիշատակին՝ 1867-ին Բաֆֆին դրել է հետեւեալ տողերը :

«Ինձ քաղցր էր այդ պաշտելի տղամարդի յաւիտենական յիշատակը յարգել՝ իմ աշխատութեանց երախայրիքն նորան ընծայելով : Թէպէտ «Սալբի»-ի հեղինակը չէ ունեցել պատւելի հանդուցելոյ հետ խստ մօտաւոր ծանօթութիւն, բայց քանի կայ եւ կապրի հայ լեզուն եւ գրականութիւնն, Մ. Նալբանդեանցի անմահ յիշատակը միշտ կունենայ իւր զգալի համակրութիւնքը ամէն մի հայի սրտում մինչեւ գարերի վերջը» :

«Սալբի»-ի հետ զուղընթաց Բաֆֆին գրել է եւ ուրիշ վէպիկներ ու պատկերներ, որոնց մի մասից հետագային կազմւեցին երկու հատոր «Փունջ»-երը :

Առհասարակ, Բաֆֆիի համար սովորական էր գրել ու պահել ձեռագիր վիճակում, մինչեւ հրատարակիչ դանելը : «Զահրումար»-ն էլ պատրաստ էր 1871-ին, բայց տպւեց միայն 1895-ին :

Բաֆֆիի տպագիր երկերից առաջնը լոյս տեսաւ 1860-ին, «Հիւսափայլ»-ում : Իր ձանապարհորդական տպաւորութիւններն էին

այդ, յատկապէս Աղթամարի մասին։ Այնտեղ զետեղւած էր եւ հըս-
չակաւոր «Զայն տուր, ո՛վ ծովակ»—ը, որ մինչեւ այսօր էլ մեր ազ-
գային սիրւած երգերից է, որի մէջ այնպէ՛ս յուղումով երխասարդ
Բաֆֆին դրել է իր ազգասիրական թրթուռն ապրումներն ու նւիրա-
կան տենչերը —

Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ՝

Տեսնել Մասիսի գլխին հայ դրօշակ…

Բայց Բաֆֆիի գրւածքները հրատարակութեանց շարքը սկսում
է «Մշակ»—ից։ Գր. Արծրունին պատմում է, որ Բաֆֆին իր խոր-
հրդով «Մշակ»—ի առաջին համարներից սկսել է գրել «Պարսկաստա-
նի նամակներ»—ը։ Արծրունու ասելով՝ «այդտեղից էլ ծնունդ առաւ
Բաֆֆիի կեղծ անունը, որով Մելիք - Յակոբեան այնուհետեւ յայտ-
նեցաւ մեր գրական ասպարիզում» : *) Նոյն «Մշակ»—ում իրար յե-
տեւից լրյա տեսան մանր վէպիկներ, գլխաւորապէս պարսկահայոց
կեանքից, որոնց հիմնական գիծը գրեթէ միշտ հայի հարստահար-
ւած վիճակն էր մահմետական աշխարհում։

Բաֆֆիի գրւածքները շատ շուտով հեղինակի վրա հրաւիրեցին
համբային ուշմարտինը, բայց իրական գրական համբաւ Բաֆֆին
ձեռք բերեց 1878 մայիսից յետոյ, երբ «Մշակ»—ի թերթոնում սկսեց
լրյա տեսնել «Զալալէդդին»—ը, որ անօրինակ ցնցում ու խանդավա-
ռութիւն առաջ բերեց հասարակութեան մէջ։

«Զալալէդդին»—ին յաջորդեցին «Խենթ»—ը, «Խաչաղողի Յիշատա-
կարան»—ը, «Խամսայի Մելիքութիւններ»—ը, «Դաւիթ Բէկ»—ը, «Կայ-
ծեր»—ը, «Ռակէ Աքաղաղ»—ը եւ այլն։ Միեւնոյն ժամանակ Բաֆֆին
գրում էր եւ հրապարակախօսական յօդւածներ հայկական դատի,
կաթողիկոսական ընտրութիւնների եւ աղջային - մշակութային զա-
նազան հարցերի մասին։

Թէ «Զալալէդդին»-ն ու «Խենթ»—ը ինչպիսի ողեւորութիւն էին
առաջ բերել հասարակութեան մէջ, երեւում է, օրինակ, Բաֆֆիի
1882 թ. մարտ 20-ին հաղորդած հետեւեալ տեղեկութիւններից։

«Զալալէդդին» իմ աշխատութիւններից ամենագեղեցիկն է. մի
ժամանակ մի քանի պարոններ դիտաւորութիւն ունէին այդ վէպիկը
մի քանի հազար օրինակներով տպել տալ եւ ձրի բաժանել, մանա-
ւանդ Տաճկաստանի հայերի մէջ։ Բայց մեր մէջ որպէս ամէն օգտա-
ւէտ դիտաւորութիւն մնում է անկատար, այդ եւս այնպէս մնաց։

*) «Մշակ», 1879 թ., № 205։

«Մի քանի շաբաթ առաջ ալ . Նիկողոսեանի միջնորդութեամբ Կ. Պոլսից զիմեց ինձ մի պարոն , որը տեղային լեզւագէտ եւ բարձր ուսում ստացած երիտասարդներից մէկն է , թէրզեան ազգանունով . նա «ԽԵՆԹԸ» եւ «Զալալէզզինը» Փրանսերէն լեզով թարգմանելու թոյլտութիւն էր ինպրում . ևս , ի հարկէ , մեծ յօժարութիւնով իմ համաձայնութիւնը յայտնեցի . . .

«Դոկտոր Թամամշեանը , որ Կ. Պոլսի ոռւսաց գեսպանատան բժիշկն է , զրած էր ինձ , որ իր առաջարկութեամբ «ԽԵՆԹԻց» դրամա է կազմւել եւ դիտաւորութիւն ունի Փրանսերէն եւ անդլիերէն լեզուներով թարգմանել տալու , որպէսզի Եւրոպայի մի քանի նշանաւոր քաղաքներում ներկայացւի : *)

Այս ամենը Բաֆֆին քաջալերում է . նա դոհ է , որ իր աշխատութիւնները «ապարդիւն չեն մնում» :

Բայց մտահողութիւններն ու յուղումներն էլ պակաս չեն : Իր բարեկամ Փանեանցին գրած 1882 թ . մարտ 30 նամակում Բաֆֆին յայտնում է , որ Սոոկւայում ապրող թաւրիզեցի ուսանող , իր նախկին աշակերտ Վարդան Թումանեանցը ցանկութիւն է յայտնել Հրատարակելու «Զալալէզզինը» : Բայց «որովհետեւ նա գեռ անփորձ է , եւ նրա հայրը այն մարդկանցից չէ , որ հասկանայ տպագրական պայմանները» , Բաֆֆին խնդրումէ հասկացնել Վարդանին , որ՝ «Եթ առանձին մարդիկ յանձն են առնում տպագրելու մի որ եւ իցէ հեղինակի դրքերը , նախ վարձատրում են հեղինակին տպագրելու իրաւունք ստանալու համար» : Եւ գնում է հետեւեալ պայմանները .

«1. Իրաւունք եմ տալիս միայն առաջին տպագրութեան համար եւ տպել ոչ աւելի , քան 2400 օրինակ : Երկրորդ կամ ապագայ տպագրութիւնների իրաւունքը ինձ վրայ եմ պահում :

«2. Որպէս վարձատրութիւն պէտք է ինձ կանխիկ վճարեն կամ 200 ըուրլ փող , կամ 500 օրինակ տպւած դրքերից , այն պայմանով , որ իրանք Թիֆլիսում իրաւունք չունենան վաճառելու , որպէսզի իմ ունեցածը այստեղ վաճառեի : **)

Փանեանցը Ապր . 13-ին պատասխանում է , թէ Երիտասարդ թումանեանցը համաձայն է առաջարկւած պայմաններին «Զալալէզզին»-ի մասին եւ ցանկութիւն ունի տպագրելու նաեւ «Կայծեր»-ը : Բաֆֆին , մայիս 9-ին , յայտնում է , թէ «Մշակ»-ի մէջ Հրատարակւած իմ նամակից Դուք արդէն տեղեկացած կը լինէք , որ ես ինքս

*) «Արարատ» , 1913 թ . , № 4 :

**) «Արարատ» , 1913 թ . , № 4 :

սպառաստում եմ «կայծեր»-ը տողագրելու։ Ծախքի համար 500 բուրլի արդէն ունեմ, մնացածը մի կերպ կը տնօրինեմ։ Եթէ պ. թումանեանցի հայրը նրան այնքան միջոցներ կը տայ, որ նա կարող լինի «կայծեր»-ի նման մի գիրք տողագրել, որի համար ամենափոքրը 1500 բուրլի ծախք է հարկաւոր, — այդ գէպքում ես նրան խորհուրդ կը տամ մի բան անել, փոխանակ միայն «Զալալէդղին»-ը մի գրքոյկով հրատարակելու, նա աւելի լաւ կանչը, եւ աւելի նողատակայարմար կը լինէր, եթէ ի մի հաւաքէր իմ մի քանի փոքրիկ վէպիկները եւ բոլորը միասին մի գրքով հրատարակէր։ Ձեզ յայտնի է, որ սկսեալ «Մշակ»-ի առաջին տարիներից, այդ լրագրի մէջ տպել են իմ զանազան վէպիկները կամ փոքրիկ պատկերները։ Այդ բոլորը այժմ մոռացւած են, բայց ժողովրդի ընթերցանութեան համար մեծ նշանակութիւն ունի։ Մի քանիսը այդ աշխատութիւներից թարգմաւեցան գերմաներէն եւ ոուսերէն լեզուներով եւ տրաւեցան զանազան պարբերական հրատարակութիւնների մէջ, թէ այստեղ եւ թէ Բերլինում։ Կարելի էր ընտրել այդ վիպակներից մի քանիսը եւ «Զալալէդղին»-ի հետ միասին տպել. այն ժամանակ գիրքը մի խոշոր գիրք կը ստանար եւ կը լինէր մի հաւաքածու դոնէ իմ աշխատութիւնների մի մասի։

« Թումանեան եղբայրները հարուստ եւ բարի մարդիկ են. եթէ կամենում են հայոց գրականութեանը որ եւ իցէ կերպով նողաստել, պէտք է այնպիսի գործ կատարեն, որ իրանց անւանը արժանի լինի եւ պատիւ բերէ»։ *)

Հստ երեւոյթին, սակայն, թումանեանները այնքան էլ «բարի» մարդիկ չեն, թափիի 4 Օպոստ. նամակում արդէն տեսնում ենք դժոհութեան շեշտեր։ Նա Փանեանցին ուղարկում է 10 համար «Մըշակ» իր պատմւածքներով եւ աւելացնում է ։ Թումանեանները, «Եթէ կը ցանկանան, թող նոր ուղարկած վէպիկները «Զալալէդղին»-ի հետ միասին առանձին գրքով տպել տան. եթէ ոչ, թո՛ղ մնայ։ Դուք առանձին ուշադրութիւն մի գարձրէք։ Պայմանները կը լինեն միեւնոյնը, որպէս սկզբից գրած էի, թէեւ պ. պ. Թումանեանների հարստութեան մէջ շատ զգալի չեր լինի, եթէ մի գիրք հեղինակի օգտին տպագրել տալու լինէին։ Բայց այսպիսի բարերարութիւն ես իմ հայրենակիցների կողմից չեմ սպասում» . . . **)

Նոյն նամակում յայտնում է նաև, որ «աղոլկովնիկ Մելիք - Հայ-

*) «Արքան», 1913 թ., թիւ 4, էջ 343 - 4:

**) Նոյն տեղը։

կազեանը յանձն է առել «Դաւիթ Բէկ»-ի բոլոր հատորները իր ծախ-քով նորից տպագրել տալու։ Դա մի դույելի օրինակ է, մանաւանդ մի զինւորականի կողմից։

Նոյն տեղ գրում է նոյնպէս, որ «Խամսայի Մելիքութիւնները» տպւած են 1200 օրինակ, «բայց այժմ ցենզորի հետ մեծ վէճ ունենք. թոյլ չէ տալիս, որ գրքերը գուրս գան՝ ասելով, թէ նորից պէտք է քննւեն, որովհետեւ գրքի մէջ շատ ազատ մտքեր են անց կացել։ Զը նայելով, որ «Մշակ»-ի մէջ տպւելու ժամանակ ինքը թոյլ է տւել, այժմ կրկին վիճարանութիւններ է յարուցանում։ Զգիտեմ ինչով կը վերջանայ. եթէ նորից քննելու լինեն, գիրքը բոլորովին կը կորցնէ իր նշանակութիւնը, թէեւ սկզբից «Մշակ»-ի տպւելու ժամանակ շատ կտորներ են հանել նրա միջից եւ երբեմն ամբողջ դլուխներ ջըն-ջէլ են»...»

Ի վերջոյ, զրաֆննիչը տեղի է տալիս, եւ գիրքը լոյս է տեսնում։ Հոկտ. 7 նամակում Բաֆֆին, ի միջի այլոց, զրում է Փանեանցին. « Զեմ կարող առանց վրդովմունքի յիշել մեր անշնորհակալ հասարակութեան անտարբերութիւնը «Խամսայի Մելիքութիւնները» զրքի վերաբերմամբ։ Այդ գիրքը իմ բոլոր գրքերի պասկը պէտք է համարել. ես զրանով կենդանացրի մի վաղուց կորած եւ մոռացւած պատմութիւն. ես զրանով ապացուցի, որ հայկական իշխանութիւնը շարունակում է մինչեւ ներկայ դարը։ Դա մեծ բան է։ Բայց փոխանակ հասարակութիւնից խրախուսանք եւ քաջալերանք դանելու, ամէն կողմից գանգատներ եմ լսում. «Գինը թանգ էք նշանակել»։ Եւ այդ ասում են այն մարդիկը, որ իրանց քիքերի համար հազարներ են վատնում։ Ոչ ոք չէ մատառում, որ հեղինակը ճանապարհորդել է, ծախքեր է արել, նիւթեր է հաւաքել, թէ իւր առողջութիւնը, թէ իր կոսէկները վատնել է, մինչեւ կարողացել է մի այսպիսի պատմութիւն ի լոյս ընծայել։

« Ես մեր հասարակութեան սառնասրտութեան վրա ուշագրութիւն չեմ դարձնի, կը շարունակեմ աշխատել, միայն ինձ շատ երջանիկ կը համարէի, եթէ քանի կենդանի եմ, իմ բոլոր հեղինակութիւնները տպած տեսնէի։ Առողջութիւնս արդէն սկսել է քայլքայւել. կուրծքիս հիւանդութիւնը այս աշուն աւելի սաստկացած է, կենսական ուժերս օր ըստ օրէ սպառուում են... Ճանապարհորդութիւնը բաւական կազդուրում է ինձ, բայց այս ամառ որքա՛ն ցանկացայ զէպի Վանի կողմերը գնալ, չկարողացայ. պատճառները կարող էք նախագուշակել... » : *)

*) Նոյն տեղը, էջ 346 - 47:

Տաճկահայաստան ճանապարհորդելու գաղափարը Ռաֆֆիի բուռն տենչերից մէկն էր, բայց նիւթական միջոցների բացակայութիւնը արդեւք էր լինում։ Այս մասին կարդում ենք Մ. Փանեանցին ուղղած նրա 1881 թ. 26 մայիս նամակում էլ։

« Մոսկուայի ուսանողներից մէկը նամակով գիմել էր իմ բարեկամ պ. Գաբրիէլ Միրզոյեանցին՝ յայտնելով, թէ տեղիդ անկելանոցի զբաժարկում կայ մի զումար, եւ հոգաբարձութիւնը ցանկութիւնը ունի այդ զումարը մի որ եւ իցէ աղջային գործի համար ծախսել, եւ իրը թէ հոգաբարձական ժողովում հարց է ծագել, որ յիշեալ գումարը տան ինձ տաճկական Հայաստանում ճանապարհորդելու համար, եւ հարցը մնացել է դեռ անվճիո, որովհետեւ չգիտեն՝ ևս յանձն կառնե՞մ գնալ Հայաստան թէ ոչ։ Իմ գիտաւորութիւնը գիտենալու համար գրած էին պ. Միրզոյեանցին, որ ինձանից հարցմունք անէ։

« Ես դեռ անցեալ տարի, յունիս ամսի սկզբին, պատրաստեցայ կ. Պոլիս գնալու, որ այստեղից անցնեմ Հայաստան, բայց մի քանի արգելքներ, որոնց մէջ գլխաւոր տեղը բոնում էր նիւթական միջոցների պակասութիւնը, թողեցին իմ ցանկութիւնը անկատար։ Այժմ, եթէ իրաւ, կայ մի գումար, որ կամենում են Հայաստանի ճանապարհորդութեան համար գործ դնել, ևս մեծ ուրախութեամբ յանձըն կառնեմ այդ ճանապարհորդութիւնը, հետեւեալ պայմաններով առաջին։ Իմ ճանապարհորդութիւնը կը տեւէ հինգ ամիս։ այդ հինգ ամսուայ համար ծախսք կը պահանջնեմ հազար րուբլի։ Երկրորդ, որ ամենազլիաւորն է, չպիտի տարածայնուի, թէ ես գնում եմ Հայաստան։ Ես պիտի աշխատեմ, որքան կարելի է, իմ ճանապարհորդութիւնը գաղտնի պահէլ։ Պատճառները, առանց իմ ասելու էլ, Դուք կը հասկանաք։ Զեզ յայտնի է, թէ ինչ հալածանք կայ Տաճկաստանում այն անձանց գէմ, որոնք աշխատում են Հայոց գործի համար։ Եթէ իմ Հայաստան գնալը հէնց սկզբից հոչակւի, անկարելի է, որ թուրքաց կառավարութիւնը ուշադրութիւն չդարձնի։ Թիֆլիզի տաճկաց կոնսուլը ամենաչնչին երեւյթներն անդամ հաղորդում է իր կառավարութեան, ուր մնաց մի փոքր ի շատէ յայտնի մարդու ճանապարհորդելու նպատակով Հայաստան գնալը։ Թէեւ իմ ճանապարհորդութիւնը ոչինչ քաղաքական նպատակ չունի եւ չի պիտի ունենայ, այնուամենայնիւ, թուրքաց կառավարութիւնը շատ պատճառներ ունի կասկածանքով վերաբերել դէպի մի ճանապարհորդ, որ միւսաստանից գնացել է Հայաստան։ Այդ կարող է ոչ միայն իմ անձը վտանգի ենթարկել, այլ եւ զրկել ինձ հետազօտութիւննե-

րից, որոնք միայն ուսումնական բնաւորութիւն ունեն եւ վերաբերում են երկրի ու բնակիչների գրութեանը, նրանց փոխադարձ յարաբերութիւններին եւ այլն:

« Բայց որպէսպի հնար լինի աւելի խորը թափանցել ժողովրդի մէջ, զբա համար հարկաւոր են իմ վերեւ յիշած պարմանները, այսինքն՝ ճանապարհորդել ծպտեալ կերպով (ինկոգիո):

« Իմ կարծիքս այս է. եթէ տեղւոյդ հոգաբարձութիւնը կընդունէ իմ առաջարկած պայմանը, թո՛ղ 1000 բուրլի բոլորովին ուրիշ անունով ուղարկէ «Մշակ»-ի խմբագրատունը Պ. Արծրունուն. պ. Արծրունին այդ գումարը կը կարգադրէ իմ ճանապարհորդութեան համար: Այդ կարող են դիտենալ Մոսկայում մի քանի խոհեմ անձննք միայն, իսկ մնացեալ հասարակութեանը պէտք է անյայտ մնայ»: *

Հսու երեւոյթին, սակայն, այդ լուրը սխալ էր հաղորդւած, որ երեւում է Բաֆֆիի հևտեւեալ տողերից Փանեանցին.

« Կասպարեան անկելանոցից» ես ոչինչ ակնկալութիւն չունէի: Այդ մասին խօսել էին, կարգադրել էին ուրիշները, առանց նախապէս իմ հաճութիւնը հարցնելու: Թո՛ղ անկելանոցի մարդիկը անկելանոցի վրա մտածեն... մենք աւելի կենդանի հիմնարկութիւններից կը սպասենք մեր նպատակների իրազործումը»:

Ինչպէս այս, այնպէս եւ «Զալալէդղին»-ի հրատարակութեան խնդիրը բաւական ջղայնացրեց Բաֆֆիին: Գործը ձգձգւեց երկու տարի շարունակ: 1884-ին հրատարակ է գրւում Բաֆֆիի յորելեանը տօնելու խնդիրը, եւ Բաֆֆին արտօնութիւն է տալիս յորելենական յանձնաժողովին հրատարակել «Զալալէդղին»-ը՝ արդիւնքը յորելեարին յատկացնելու պայմանով, եւ երբ այդ մասին գրւում է «Մշակ»-ում, թումանեանը Մոսկայից հեռագրով ինդքումէ չձեռնարկել գրքի հրատարակութեան, քանի որ ինքը արգէն տպում է: Քիչ յետոյ, պարզում է նաեւ, որ թումանեանը հրատարակութիւնը անում է Բաֆֆիի գրած սկզբնական պայմաններով, այսինքն՝ «200 բուրլ փող, կամ 500 տպւած գիրք», մինչդեռ յանձնաժողովը ամբողջ հասոյթը տրամադրում էր հեղինակին: Բաֆֆիի վրդովումը չափ ու սահման չունի: Նա նամակներ է գրում թումանեանին, բայց՝ ոչ մի պատասխան: Ու վրդովւած՝ բացազանչում է 1884 թ. մարտ 7 նամակում: «Հիմա ի՞նչ պէտք է անել այդ տեսակ լակոտների հետ: Ես նրա հօր մասին շատ անեկտողներ էի լսել, բայց երեւում է, որ որ-

*) «Արարատ», 1913 թ., № 4, էջ 338 - 9:

դին պիտի գերազանցէ հօրը... Ես թոյլ չեմ տայ, որ նա ինձ հետ այս տեսակ խաղեր խաղայ: Նա գրականութեան գործում նոյնախի խարդախութեամբ է վերտում, որպէս իր հայրը վարւում է քեշմիշի եւ բաղամի վաճառականութեան մէջ»:

Բայց, ի հարկէ, դոյլոյթը անցնում է ատարդիւն. լնչպէ՞ս կարող էր Բաֆֆին «Թոյլ չտալ», որ թումանեանցը «այս տեսակ խաղեր խաղայ»:

Բաֆֆին բաւական նեղութիւն է քաշում եւ «Կայծեր»-ի հրատարակութեան առթիւ, որի առաջին հատորի բաժանորդադրութիւնը նա բաց էր արել 1879 թ. վերջերը: Հեշտ գործ չէր այն ժամանակ, մանաւանդ, Բաֆֆիի նիւթական պայմաններում, այդպիսի մի հատորի հրատարակութիւնը: 1880 թ. նոյեմբ. 23-ին, Մելքոն Փանեանցին ուղղած նամակում, Բաֆֆին հետեւեալ տեղեկութիւններն է տալիս այդ առթիւ.

«Կայծեր»-ի տպագրութիւնը, հակառակ իմ ցանկութեան, արդարեւ, բաւական ուշացաւ: Ես ամէն ջանքով աճապարում էի, որ այս աշխատութիւնը, իրեւ ժամանակակից վէպ, իրրեւ մեր մտքերը զբաղեցնող հարցերը չօշափող մի երկասիրութիւն, որքան կարելի էր, չուտով լոյս տեսնէր: Բայց յետագութեան պատճառը պէտք է որոնել երկու գլխաւոր պատճանների մէջ. նախ, որ ես մինչեւ այսօր իմ բաժանորդներից չկարողացայ այնքան փող ստանալ, որ դոնէ ուղագրութեան ծախքը ծածկէր. երկրորդ, ես յոյս չունէի, որ այս աշխատութիւնը տեղույս ցենզուրայից ամբողջապէս անցնէր: Տաճկաստանի հայոց վերջին շարժումներից յետոյ, այստեղի ցենզուրան ոկտեց բաւական խստութեամբ վերաբերեւ դէպի ամէն մի դրածք, որ կարող էր նրանց մէջ ազգասիրական դրացմունք եւ ազգասիրական ողի ներշնչել: Այդ մի բախտ էր, որ «Խենթը» անցաւ, թէեւ նրա ամենագեղեցիկ տեղերը ջնջւեցան «Մշակի» մէջ տպւելու ժամանակ: Բայց ես մէծ դժւարութիւն կրեցի, մինչեւ կարողացայ կրկին հրաման ստանալ երկրորդ տպագրութեան համար:

« Այս հանգամանքը ի նկատի առնելով՝ ես դրեցի ոլ. Գարրիէլ Միրզոյեանցին, որը Մոսկվայի համալսարանի ուսանող է, որ յանձն առնէ «Կայծերը» Մոսկվայում տպագրելու: Այնուեղ ցենզուրան աւելի աղատ է, թուղթը աւելի էժան է եւ տպագրութիւնը աւելի մաքուր: Տակաւին պատասխան չեմ ստացել, բայց յոյս ուսեմ, որ կընդունէ, որովհետեւ այդ պարոնը, որպէս իմ լաւ բարեկամ, նոյնպէս եւ մեր ամենաեռանդու եւ գործունեայ երիտասարդներից մէկն է:

«Պ. Միրզոյեանցը մի երկու ամիս առաջ դիմել էր ինձ, խնդրե-

լով, որ ես իրաւունք տամ «ԽԵՆԹԸ» Մոսկվայում տպագրելու, բայց ես չկարողացայ կատարել նրա գեղեցիկ ցանկութիւնը, որովհետեւ նրանից առաջ արդէն իրաւունք էի ուել Շուշիում տպագրելու»: *)

Նամակի Յետ Գրութեան մէջ Բաֆֆին յայտնում է նաեւ հետեւեալը: «Ես պատրաստել եմ մի պատմական վէպ եւս «Դաւիթ – Բէկ» անունով, որ շուտով կը սկսէի տպւել «Մշակի» մէջ: Վէպի բովանդակութիւնը առնաւած է Դաւիթ Բէկի՝ Սիւնեաց իշխանի կեանքից: Դորժողութիւնների մի մասը կատարում է Զեր հայրենիքում»: **)

Բայց 1881 թ. Փետր. 25-ին Բաֆֆին գրում է Փանեանցին, թէ «Կայծերը» Մոսկվայում տպագրելու գիտաւորութիւնից հրաժարւել է, որովհետեւ թիֆլիսում գրաքննութիւնը բաւական մեղմացել է: Խոստանում է շուտով ձեսնարկել տպագրութեան, «եթէ ծախքը բուրովին լրացրած կը լինեմ»:

Յայտնում է նոյնպէս, որ՝ «Դաւիթ – Բէկը» «Մշակ»-ի մէջ հրատարակւելով՝ միեւնոյն ժամանակ առանձին գրքով տպւում է ինձ Համար. երբ կը վերջանայ, քանի օրինակ որ կը ցանկանաք, կուղարկեմ Զեղ»:

Իսկ 1882 թ. յունար 22-ին, յայտնելով, թէ աւելի քան երեք ամիս թիֆլիսից բացակայ է եղել ճանապարհորդութեան պատճառով՝ աւելացնում է, որ «Դաւիթ – Բէկը» որոշ ընդմիջումից յետոյ, «գլարձեալ սկսեցաւ տպւել, և ներկայ տարւայ յունար ամսի վերջում կաւարտէի երրորդ գրքի տպագրութիւնը, միեւնոյն դիրքով, որպէս լոյս տեսաւ այդ վէպի առաջին եւ երկրորդ գիրքը միասին: Կը մնայ մի հատոր եւս հրատարակելու, եւ այդ վէպը բուրովին կը վերջանայ, որովհետեւ ամբողջ վէպը չորս գրքերից է բաղկացած» :

Միեւնոյն ժամանակ դառնօրէն զանդատում է.

« Զգիտեմ, Զեղ ուղարկւած հատորները վաճառեցա՞ն, թէ ոչ: Երեւակայեցէք, ես այդ գրքից միայն 600 օրինակ եմ տպել տւել եւ մեր բոլոր հայարնակ քաղաքներում ուղարկել եմ, բայց գեռ ոչ մի տեղից փող չեմ ստացել: Իսկ զովասանական դարտակ նամակներ շատ եմ ստանում, թէ հետաքրքրութեամբ կարգում են, անհամբերութեամբ սպասում են միւս հատորների լոյս տեսնելուն եւ այլն... Բայց միւս հատորները ի՞նչ միջոցներով պիտի լոյս տեսնեն — զրայրա ոչ ոք չէ մտածում:

*) «Արարտ», 1913 թ., № 2 – 3, էջ 202:

**) Մ. Փանեանցը Գողթնեցի էր՝ Վերին – Ազուլիսից:

« Մենք մեր հասարակութիւնից շատ բան չենք պահանջում, միայն մեր աշխատութեան դինը մեղ տան, որ կարողանանք շարունակել մեր գործունէութիւնը. Հակառակ դէպքում կը մնայ մեղ թողնել զըրական ասպարէզը. գոնէ հանդիսա խղճմտանքով կարող ենք ասել՝ մենք կատարեցինք, որքան մեզանից կախւած էր, իսկ դուք մեղ զընահատել չկարողացաք»: *)

Առհասարակ Բաֆֆիի հոգեկան ապրումները ծանր են: Նրա նամակներում յաճախ պատահում ենք «զըրականութեան անբախտ մըշակ», «իմ անմխիթար գործունէութիւնը» և նման արտայայտութիւններ: Բաֆֆին թեթեւ որտով հրապարակ չհանեց եւ իր ամենախոշոր գործը, որի մասին 1888 թ. մարտ 19 նամակում դրում էր. «Լոյս տեսաւ իմ մի նոր աշխատութիւնը՝ «Սամւէլ» պատմական վէպը: Թէ որպիսի ընդունելութիւն կը գտնի ընթերցող հասարակութիւնից, — դեռ չդիտեմ, միայն այսքանը կտսեմ, որ հայերը տակաւին պատրաստւած չեն մի լուրջ եւ ծանր բան կարդալու համար»:



Բաֆֆիի յոռետեսութիւնը որքան եւ հասկանալի, պէտք է համարել չափազանցութիւն. եթէ «հայերը տակաւին պատրաստւած չէին մի լուրջ եւ ծանր բան կարդալու», հնց իր՝ Բաֆֆիի երեւան գալը հայ իրականութեան մէջ կը լինէր անհասկանալի: Եթէ Արովեանի ու Նալբանդեանի օրերին հայերն իսկապէս «սպատրաստուած չէին», Արծրունու եւ Բաֆֆիի ժամանակաըջանում հայ կեսնքն արդէն այնքան յառաջացել էր, որ Բաֆֆիի պէս մի հեղինակ կարող էր հասարակութեան սրառում գտնել կենդանի արձագանք եւ քարոզած դադարաբները՝ գործադրելու ընդունակ սերունդ: Ապացոյց, որ դեռ Բաֆֆին ողջ էր, երբ ծնունդ առաւ Հնչակեան կուսակցութիւնը, իսկ Բաֆֆիի մահւանից երկու տարի յետոյ, հիմնեց եւ Հ. Յաշնակցութիւնը, Բաֆֆիի յեղափոխական ծրագիրները գործադրող կազմակերպութիւնը: Դաշնակցականները եղան Բաֆֆիի երեւակայան հերոսների կենդանի մարմնացումը, եւ Բաֆֆին ինքը՝ սուածին եւ իսկական դաշնակցականը:

Ա. Վ. Բ.

*) «Արարատ», 1913 թ., № 4, էջ 341: